ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

17 դեկտեմբերի շաբաթ 2022
տպագրության ԺԱ տարի

182
(2662)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 157

2021 թվականի օգոստոսի 25-ին Ազգային ժողովում ընթանում էր կառավարության հետ հարցուպատասխանը: ԱԺ ընդդիմադիր «Հայաստան» խմբակցության պատգամավոր Գեղամ Մանուկյանը հիշեցրեց Նիկոլ Փաշինյանին իր իսկ խոսքերը, երբ կորոնավիրուսային համավարակի ընթացքում՝ հերթական «կորոնալայվերից» մեկի ժամանակ, վերջինս ասել էր. «… Եթե մեղավոր է կառավարությունը, մեղավոր է նաեւ ժողովուրդը, որովհետեւ էս ժողովուրդն է էս կառավարությանը բերել իշխանության»: Սակայն Նիկոլ Փաշինյանը միանգամից հերքեց՝ ասելով, թե ինքը նման կերպ չի արտահայտվել: Դեռեւս 2020թ. հունիսի 3-ին իր «կորոնալայվում» Նիկոլ Փաշինյանը բառացիորեն ասել էր. «… Եթե մեղավոր է կառավարությունը, մեղավոր է նաեւ ժողովուրդը, որովհետեւ էս ժողովուրդն է էս կառավարությանը բերել իշխանության:… Լավ ենք, վատ ենք, էս ենք»: Գաղտնիք չէ, որ Նիկոլ Փաշինյանը մշտապես է աչքի ընկնում մանիպուլատիվ, ոչ ճշտված ինֆորմացիաներ տրամադրելով, եւ Ազգային ժողովի այս միջադեպն էլ հերթական ապացույցներից մեկն է: Նա հերթական անգամ արել է հայտարարություն, ապա փորձել հերքել, թե նման բան ամենեւին չի ասել:

Ադրբեջանի կողմից Արցախը շրջափակելուց՝ «Լաչինի միջանցքը» փակելուց հետո ՀՀ իշխանության ամենատարբեր ներկայացուցիչներ, իրար հերթ չտալով, ելույթներ են ունենում ու մեղադրում Արցախում խաղարարար առաքելություն իրականացնող ռուսական զորակազմին, թե իրենց պատասխանատվության գոտու անվտանգ երթեւեկը չեն ապահովում: «Ժողովուրդ» օրաթերթը, սակայն, տեղեկացավ, որ իշխանության ներսում ոչ բոլորն են վատ տրամադրված Ռուսաստանի դեմ, ավելին՝որոշներն այն տեսակետին են, որ խաղաղապահներին շատ ավելի լայն լիազորություններ պետք է տրվեն: ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Արմեն Խաչատրյանը, օրինակ, վստահ է՝եթե Ռուսաստանն այժմ Ուկրաինայի հետ պատերազմի մեջ չլիներ, ապա, պարզ է, նրա ձայնի տոնայնությունը բոլորովին այլ կլիներ: «Այս ամենը պետք է հաշվի առնել ու հասկանալ՝ ՌԴ-ն ունեցած մանդատով արդյոք կարողանում է իր առջեւ դրված խնդիրը լուծել: Այո, պարտավոր է լուծել, բայց կարողանո՞ւմ է լուծել: Սա՛ է խնդիրը»,- «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ասում է նա: «Իսկ եթե չի կարողանում լուծել, ապա ի՞նչ անել»,- մեր հարցին ի պատասխան՝պատգամավորն արձագանքում է՝այդ հարցում հայկական դիվանագիտությունից շատ բան կախված չէ: «Եթե չի կարողանում, ապա հայկական կողմը կարող է ռուսական զորքերի մանդատը բարձրացնելու ու նրանց՝որպես միջազգային խաղաղապահ մանդատ տալու մասին մտածել: Սրանք բացարձակ իմ մտորումներն են»,- բարձրաձայնում է ՔՊ-ական պատգամավորը:

ԲԴԽ-ում կրքերը չեն հանդարտվում: «Ժողովուրդ» օրաթերթին դատական համակարգից հասած լուրերի համաձայն՝հաջորդ ազատման դիմում գրողը լինելու է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանի եղբայրը՝Դավիթ Խաչատուրյանը: Ըստ լուրերի՝ԲԴԽ նախագահ Կարեն Անդրեասյանն ամեն գնով ցանկանում է հրաժեշտ տալ նախկին պաշտոնակատար Գագիկ Ջհանգիրյանի «թիմակից» համարվող դատավոր կամ գիտնական անդամներին, ու այդ անձանցից մեկը ԲԴԽ դատավոր Ստեփան Միքայելյանն էր, իսկ հաջորդը լինելու է Դավիթ Խաչատուրյանը: Այս ամենը կապված է նաեւ այն որոշումները ստորագրելու հետ, որոնք կայացրել է Գագիկ Ջհանգիրյանը: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի ԲԴԽ անդամ Դավիթ Խաչատուրյանն ասաց. «Նման բան չկա, այն որոշումները, որոնք ստորագրել եմ, իմ ներքին համոզմունքով ձեւավորված որոշումներ են, ես ապաքաղաքական մարդ եմ ու հրաժարական էլ չեմ ներկայացնի»: Անդրադառնալով իր եւ Կարեն Անդրեասյանի լարված հարաբերություններին՝նշեց. «Այդ որ ասում եք՝ լարված, սկզբնական շրջանում աշխատանքային բան է եղել, հիմա հարթվել գնացել է»:



ՀՀ վարչապետի աշխատակազմի կողմից վերջին շրջանում իրականացված գնումները բավականին ուշագրավ են: Մասնավորապես, վարչապետի աշխատակազմը «ՄԱՔՍ ՕԻԼ» ՍՊԸ-ից 1 մլն 550 հազար դրամի Ռեգուլյար տեսակի բենզին է գնել: Գնումը կատարվել է մեկ անձից: Ըստ Մտավոր սեփականության գործակալության՝Max Oil ապրանքային նշանի իրավատերը «Մաքս օիլ» ՍՊԸ-ն է (հիմնադրվել է 2017 թվականին): «Մաքս օիլ»-ը պատկանում է ԱԺ նախկին պատգամավոր Հարություն Փամբուկյանին: «Մաքս օիլ»-ի տնօրենը Կամո Մելքոնյանն է: Նա նաեւ «Կամօյլ» ՍՊԸ-ի տնօրենն ու սեփականատերն է: «ՊԼԱԶԱ ՍԻՍՏԵՄՍ» ՓԲԸ-ի հետ վարչապետի աշխատակազմը պամանագիր է կնքել 290 հազար 430 դրամի չափով. այս գումարով իրականացվել է հանրային սննդի ծառայության մատուցում: Եվս 387 հազար 150 դրամի չափով էլ կրկին մեկ անձից գնման ընթացակարգով պայմանագիր է ստորագրվել «Էմ Բի Ջի Գրուպ» ՍՊԸ-ի հետ: Պայմանագրից «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ այս գումարով եւս կազմակերպվել է հանրային սննդի ծառայության մատուցում: Նույն ՍՊԸ-ի հետ եւ կրկին հանրային սննդի ծառայության մատուցման համար վարչապետի աշխատակազմը եւս մեկ պայմանագիր է կնքած եղել՝784 հազար 250 դրամի չափով: Նշենք, որ «Էմ Բի Ջի Գրուպ» ընկերությանն է պատկանում «Ծիրանի» ռեստորանների ցանցը: Միայն վարչապետի աշխատակազմը չէ, որ այս ՍՊԸ-ի հետ պայմանագիր ունի: 2020 թվականի մայիսի 21-ից մինչեւ 31-ը ներառյալ 11 օրվա համար մեկ անձից կատարվել է 12 միլիոն 291 հազար դրամի գնում Վնասվածքաբանության եւ օրթոպեդիայի գիտական կենտրոնի համար: Գնումն այդ ժամանակ կատարվել է «Էմ Բի Ջի Գրուպ» ՍՊԸ-ից՝COVID 19-ի դեմ պայքարում սննդի մատակարարման ծառայությունների դիմաց:

ԼԱՉԻՆԻ ՄԻՋԱՆՑՔ

ՎՐԱՍՏԱՆԸ ՉԻ ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄ

Դեկտեմբերի 11-ից խաղաղասիրական հագուստով մի խումբ ադրբեջանցիներ, ներկայանալով որպես բնապահպան ակտիվիստներ, շինծու բնապահպանական մտահոգությունների պատրվակով փակել են Արցախը Հայաստանի եւ աշխարհի հետ կապող միակ ճանապարհը՝ Լաչինի միջանցքը: Այս ընթացքում Ադրբեջանին Լաչինի միջանցքը բացելու կոչեր եւ հայտարարություններ հնչեցին տարբեր երկրների եւ կազմակերպությունների կողմից: ArmLur.am-ը Լաչինի միջանցքում տիրող իրավիճակի վերաբերյալ զրուցել է վրաց անկախ փորձագետ Զաալ Անջապարիձեի հետ:

-Պարոն Անջապարիձե, դեկտեմբերի 11-ից ադրբեջանցի «բնապահպանները» փակել են Լաչինի ճանապարհը, եւ Արցախի կապն արտաքին աշխարհի հետ կտրվել է: Ի՞նչ եք մտածում Արցախում տիրող իրավիճակի մասին:

-Այս փուլում Լաչինի միջանցքն անկայունության լուրջ աղբյուր է հայ-ադրբեջանական հակամարտության գոտում: Փաստորեն, այս միջանցքը դառնում է յուրօրինակ ռումբ: Կարելի է հանգիստ ասել, որ, առանց այս իրավիճակի փոխադարձ ընդունելի կարգավորման, դժվար կլինի հասնել ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորմանը: Ռուս խաղաղապահներն առայժմ պահպանում են իրավիճակը, բայց թե որքան կտեւի դա, դժվար է ասել: Իրավիճակի դինամիկայի դիտարկումը դեռ լավատեսության հիմքեր չի տալիս:

-Ի՞նչ եք կարծում, ինչու՞ Ադրբեջանը գնաց նման քայլի:

-Իմ կարծիքով՝ Երեւանն ու Բաքուն տարբեր կերպ են մեկնաբանում հակամարտության գոտում հրադադարի մասին եռակողմ հայտարարությունը, որտեղ կետերից մեկում ասվում է, որ Հայաստանը Ադրբեջանին է վերադարձնում Լաչինի շրջանը: Բացի տնտեսական նկատառումներից, խոսքը վերաբերում է ոսկի արդյունահանող հանքերին եւ այլն: Կան նաեւ զուտ ռազմաքաղաքական բաղադրիչներ: Ադրբեջանը նման քայլի գնաց գուցե նաեւ այն պատճառով, որ որոշեց օգտագործել պահը: Բաքուն զգում է, որ Ռուսաստանն այժմ ամբողջությամբ կենտրոնացած է ուկրաինական պատերազմի վրա, նրա հնարավորություններն աստիճանաբար սպառվում են, եւ այս իրավիճակում անշահավետ է բարդացնել հարաբերությունները Ադրբեջանի եւ նրա դաշնակից Թուրքիայի հետ: Բացի այդ, եթե Ադրբեջանը լիակատար վերահսկողություն հաստատի Լաչինի միջանցքի վրա, եւ Ռուսաստանը եւ Հայաստանը, ինչպես նաեւ միջազգային հանրությունը չկարողանան միջամտել դրան, դա կամրապնդի նրա դիրքերը տարածաշրջանում եւ բանակցային գործընթացում:

-Տարբեր երկրներ եւ կազմակերպություններ այս ընթացքում արձագանքել են Լաչինի միջանցքում տիրող իրավիճակին, սակայն Վրաստանը լուռ է: Ինչո՞ւ:

-Բոլորին է հայտնի, որ Վրաստանը Ղարաբաղում պատերազմի առաջին օրվանից հստակ չեզոքություն է պահպանում այդ հարցում հասկանալի պատճառներով. Վրաստանում կան ապրող բազմաթիվ եւ՛ հայեր, եւ՛ ադրբեջանցիներ: Բացի այդ, Վրաստանը ոչ մեկ անգամ առաջարկել է միջնորդություն այս կոնֆլիկտում եւ, հատկապես, ավելի ակտիվ ղարաբաղյան երկրորդ պատերազմից հետո, ինչպես նաեւ իր տարածքը որպես հարթակ բանակցությունների համար: Վրաստանը հետեւողականորեն հանդես է գալիս այս հակամարտության խաղաղ եւ արդարացի լուծման օգտին:

-Ինչպե՞ս եք տեսնում հարցի կարգավորումը:

-Ինչպես հայտնի է, տարբեր ժամանակներում առաջարկվել են Լաչինի միջանցքի խնդրի լուծման տարբեր տարբերակներ, այդ թվում՝ տարածքների փոխանակում, օրինակ՝ Մեղրին Լաչինի հետ, սակայն այս տարբերակները հավասարապես հաշվի չեն առել կողմերի շահերը, եւ պարզվել է, որ մեռելածին են:

Այս փուլում հաշվի առնելով, որ կողմերի դիրքորոշումներն այս հարցում կտրուկ տարբերվում են, կարելի է խոսել միայն այն միջոցների մասին, որոնք կկանխեն նոր զինված հակամարտությունը: Կարծում եմ, որ Ադրբեջանի կողմից կառուցվող նոր միջանցքը, որը կապում է Լեռնային Ղարաբաղը Հայաստանի հետ, կօգնի լիցքաթափել հակամարտությունը, քանի որ մասամբ կվերացնի Հայաստանի մտահոգությունները այս տարածաշրջանի հետ երթուղիների միացման վերաբերյալ: Բայց քանի դեռ այս այլընտրանքային միջանցքը չի կառուցվել, Լաչինի միջանցքում անվտանգության ապահովման հրատապ անհրաժեշտություն կա: Կարծում եմ՝ լավագույն տարբերակներից մեկը կլինի ՄԱԿ-ի կամ ԵԱՀԿ-ի հովանու ներքո այնտեղ միջազգային խաղաղապահ կոնտինգենտի տեղակայումը, քանի որ կողմերի վստահությունը ռուսական խաղաղապահ կոնտինգենտի նկատմամբ կտրուկ ընկնում է: Դա նաեւ կբարձրացնի միջազգային հանրության հետաքրքրությունը տարածաշրջանի նկատմամբ, որը կարծես երկրորդ պլան է մղվել Ուկրաինայի իրադարձությունների ֆոնին: Եվ այս ընթացքում կողմերի միջեւ պետք է ակտիվ երկխոսություն ծավալվի ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ հիմքով: Այստեղ գլխավորն այն է, որ Լաչինի միջանցքի հարցը պետք է լուծվի խստորեն միջազգային չափանիշներին համապատասխան՝ ներառյալ այնտեղ ապրող հայ բնակչության իրավունքների, ազատությունների եւ անվտանգության խստիվ պահպանումը: Կուսակցությունները պետք է հեռանան մաքսիմալիստական դիրքերից:

Զրուցեց ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ

ԲԴԽ ՆԱԽԱԳԱՀ

ՀԱՎԵԼԱՎՃԱՐ ԿՍՏԱՆԱ

Հայաստանի Բարձրագույն դատական խորհրդի նախագահի աշխատավարձը ամսական կկազմի 1 մլն 996,8 հազար դրամ: ԲԴԽ նախագահի պատասխանատու աշխատավարձը կազմում է 1 մլն 331,2 հազար դրամ. լրավճարը կազմելու է 665,6 հազար դրամ: Դատարանի անդամների աշխատավարձն ամսական կկազմի 1 մլն 497, 6 հազար դրամ:

Օրենսդրական այս փոփոխությամբ բյուջեից տարեկան 61,9 մլն դրամ ավելի գումար կհատկացվի ԲԴԽ անդամների ու նախագահի աշխատավարձերի վճարման համար:

Հիշեցնենք՝ «Ժողովուրդ» օրաթերթը դեռ դեկտեմբերի 1-ին էր գրել, որ Բարձրագույն դատական խորհրդի նախագահ Կարեն Անդրեասյանը հաջորդ տարվանից կստանա ամսական 665.600 ՀՀ դրամի չափով հավելավճար, իսկ խորհրդի անդամը՝ 499.200 ՀՀ դրամ:

Նկատենք՝ Կարեն Անդրեասյանը ԲԴԽ նախագահ է դարձել այս տարվա հոկտեմբերի 7-ին, այսինքն՝ նրան հավելավճար տրամադրելու մասին նախագիծը բերվել է իր նշանակումից երկու ամիս անց:

Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԼԱՐՍՈՒՄ ՀԵՐԹԵՐ ԵՆ

Լարսի անցակետում մի քանի ամիս խցանման մեջ մնացած բեռնատարների հայ վարորդներն այժմ էլ հայ-վրացական սահմանային անցակետում են խցանման մեջ հայտնվել: «Ժողովուրդ» օրաթերթը Բագրատաշենի անցակետը հատել փորձող հայ վարորդներից ահազանգ է ստացել, որ արդեն երրորդ օրն է, ինչ չեն կարողանում հատել Բագրատաշեն-Սադախլո անցակետը: «3 օր է, ինչ վրացական կողմում եմ՝ վրացական Շուլավեր գյուղի մոտակայքում գտնվող ավտոկայանատեղիում: Մեզ ասում են, որ «տամոժնիայի» հայկական կողմում այնքան շատ են հերթերը, որ մեքենաների թողունակությունը բավական դանդաղ է իրականացվում: 2-3 ամիս հերթերի, խցանումների մեջ ենք մնացել: Սոված, ծարավ, առանց կենցաղային տարրական պայմանների օրեր ենք անցկացրել, հիմա էլ, փաստորեն, եկել ու այստեղ ենք մնացել, որովհետեւ մեր հայրենակիցները ալարում են մի քիչ արագ աշխատել, արագ կազմակերպել ամեն ինչ»,- «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում նշեց բեռնատարի վարորդներից մեկը՝ նեղսրտելով, որ սա պետության վերաբերմունքի մասին է վկայում: Մեր զրուցակիցը վորդվված նշեց, որ եթե ՀՀ քաղաքացիները պետության համար իսկապես արժեք ներկայացնեին, ապա իշխանություններն ամեն բան կանեին, ամեն ջանք կգործադրեին, որ 2-3 ամիս անմարդկային պայմաններում գոյատեւած մարդիկ օր առաջ տուն հասնեն:

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

«Երեկ առավոտյան ես ասացի, որ մենք երկար ճանապարհ ենք գնալու, եւ ասացի, որ այսօր Ստեփանակերտում հանրահավաք ենք անելու»,- հայտնում է Արցախի պետնախարար Ռուբեն Վարդանյանը:

«Մենք ունենք խնդիր, թե ոնց անենք, որ այս հանրահավաքը դառնա այնպիսի հանրահավաք, որը եղել է 1990-ականների սկզբին: Դա պետք է լինի անկեղծ շփում կառավարության ու ժողովրդի միջեւ: Դրա համար երկար քննարկումներից հետո որոշել ենք այսօր գնալ Մարտակերտ, այնտեղ ժամը երեքին անցկացնենք հանդիպում, հնարավորություն ունենանք մարդկանց հետ շփվելու, հաջորդ օրը գնանք Մարտունի, հաջորդ օրը՝ Ասկերան, եւ դրանից հետո պարզ կլինի, թե ինչպես կազմակերպենք հանրահավաքը Ստեփանակերտում:

Խնդիրները շատ են, իրավիճակը փոխվում է շատ դինամիկ, եւ կարեւոր է, որ ինչ-որ քայլ անելիս հիմնվենք բոլոր քաղաքացիների կարծիքի վրա:

Ես վստահ եմ, որ մենք ունենալու ենք շատ ազնիվ ու բաց քննարկումներ»,- ասաց նա:

ԿԱՐՈՂ Է ՀԱՐՎԱԾԵԼ

Ադրբեջանագետ, Ազգային ժողովի նախկին պատգամավոր Տաթեւիկ Հայրապետյանը վստահ է՝ Բերձորի միջանցքը փակած ադրբեջանցիներին, այսպես կոչված, բնապահպանական հարցերն ու Կաշենի հանքի էկոլոգիական հարցը գրեթե չի հետաքրքրում: Նրանց նպատակն Արցախը հայաթափելն է:

«Ադրբեջանն ուզում է հասնել այն բանին, որ երբ ճանապարհը բացվի, մարդիկ դուրս գան Արցախից: Ամեն ինչ դրա մասին է վկայում ու դրան է տանում: Մնացած այլ տեսությունները, իմ համոզմամբ, ավելի շատ դավադրապաշտական են, քան թե իրական: Բայց, ընդհանուր առմամբ, իրավիճակը բարդ ու ոչ միանշանակ է: Ինչո՞ւ. որովհետեւ Ադրբեջանի ղեկավարությունը շահագործման է հանձնել Կաշենի հանքը, իրավական պարտավորվածություն ունի բրիտանական կազմակերպության առաջ, եւ այժմ էլ պարզ տեքստով ասվում է, որ ադրբեջանական կողմը պարտավոր է մուտքը ապահովել»,- նշում է նա:

Նախկին պատգամավորը հղում է անում նաեւ ադրբեջանական մամուլում տեղ գտած այն հոդվածներին, որտեղ ասվում է՝ եթե հայերը տեղի չտան ու դեպի հանք տանող ճանապարհը չբացեն, իրենք կարող են նաեւ օդային հարվածներ հասցնել, ընդհուպ՝ հանքը ոչնչացնել:

«Կարծում եմ, այո, Ադրբեջանն ունի նման սցենար: Հանքին, միգուցե, ուղիղ հարվածներ չհասցնի, ու, չեմ կարծում, ռազմական լայնամասշտաբ գործողություններ սկսվեն, բայց հարվածներ հանքին կլինեն, որ այնտեղ աշխատանքը կանգ առնի: Այդ խոսակցությունն, ի դեպ, ընդհուպ մինչեւ պատգամավորների մակարդակով շրջանառվում է»,- շեշտում է ադրբեջանագետը:

ԳՅՈՒՂՈՒՄ ԳԱԶ ՉԿԱ

«Դեկտեմբերի 16-ին՝ առավոտյան 12:00-ի դրությամբ մեր գյուղում գազ չկա»,- ArmLur.am-ի հետ զրույցում ասաց Շուշիի շրջանի Հին Շեն համայնքի ղեկավար Սամվել Սարգսյանը:

Իսկ թե ինչու գյուղում չի վերականգնվել գազամատակարարումը, Սամվել Սարգսյանն ասաց, որ չի կարող պատասխանել:

Նշենք, որ նույն օրը՝ ավելի վաղ, Armlur.am-ը գրել էր, որ առանց որեւէ նախապայմանների հարեւան պետությունը վերականգնել է գազի մատակարարումը մեզ համար: Այս մասին հայտնել է Արցախի պետնախարար Ռուբեն Վարդանյանը:

Միեւնույն ժամանակ ավելի քան 1100 մարդ, որից 270-ը՝ անչափահաս, չի կարողանում վերադառնալ սեփական տները, քանի որ Լաչինի միջանցքը դեռ փակ է:

ԸՆԴՈՒՆՎԵՑ

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՍՏԵՂԾՎԻ

Ազգային ժողովը երեկ երկրորդ ընթերցմամբ եւ ամբողջությամբ արտահերթ նիստում 67 կողմ, 6 դեմ ձայնով ընդունեց Ներքին գործերի նախարարություն (ՆԳՆ) ստեղծելու վերաբերյալ օրենսդրական փաթեթը:

Նախքան քվերակությունը արդարադատության փոխնախարար Արփինե Սարգսյանը տեղեկացրեց, որ փաթեթում որոշակի փոփոխություններ են արել առաջինից երկրորդ ընթերցման ռեժիմում, որոնք, նրա խոսքով, միտված են հնարավոր տեխնիկական խնդիրները շտկելուն:

ՆԳՆ ֆունկցիոնալ բազայից հանվել է աշխատանքի միգրացիայի ոլորտում քաղաքականության մշակման հատվածը, ասաց Սարգսյանը՝ պարզաբանելով՝ կառավարությունը գտնում է, որ աշխատանքի ոլորտում քաղաքականությունը պետք է շարունակի մշակել Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունը, իսկ Ներքին գործերի նախարարությունն ընդամենը կօժանդակի տարբեր պրոցեսների կատարմանը:

Մասնավորապես, փոփոխություններ են արվել նաեւ զենքի շրջանառության կարգավորման մասին օրենքում, Ոստիկանության կարգապահական կանոնագրքում:

Այսպիսով, ըստ ընդունված նախագծի՝ Արտակարգ իրավիճակների նախարարությունը կդադարեցնի իր գործունեությունը: ՆԳՆ ենթակա մարմիններ կլինեն Ոստիկանությունը, Միգրացիայի եւ քաղաքացիության ծառայությունը, Փրկարար ծառայությունը:

«Այս փոփոխության ամենախորքային եւ ամենահեռանկարային իմաստը նոր ստանդարտի ոստիկանություն եւ նոր ստանդարտի փրկարար ծառայություն ունենալն է», - կառավարություն նիստում ասել էր վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

Կառավարությունը նախագծին հավանություն էր տվել նոյեմբերի վերջին եւ հրատապ կարգով ուղարկել Ազգային ժողով՝ հաստատման:

Ներքին գործերի նախարարություն եղել է նաեւ 90-ականներին, Ոստիկանություն դարձավ Ռոբերտ Քոչարյանի օրոք 2002 թվականից:

Նոր ստեղծվելիք նախարարությունը ներառելու է երեք խոշոր ծառայություն՝ Ոստիկանություն, Փրկարար ծառայություն, Միգրացիայի եւ քաղաքացիության ծառայություն:

Արդարադատության փոխնախարար Գրիգոր Մինասյանի խոսքով՝ նախարարությունում կկենտրոնացվի 5 հիմնական ոլորտ՝ հասարակական կարգի պահպանություն, հանցագործությունների կանխում եւ բացահայտում, աղետների ռիսկի կառավարում, միգրացիա եւ քաղաքացիություն, պետական ռեզերվների կառավարում եւ հումանիտար հարցեր:

Նոր նախարարության ստեղծումը թույլ կտա ապահովել թե՛ խորհրդարանական, թե՛ քաղաքացիական վերահսկողություն, ինչպես նաեւ այն կդառնա ոլորտի բարեփոխումների իրագործողն ու պատասխանատուն, ասաց փոխնախարարը՝ նշելով, որ ծառայությունների ղեկավարները նշանակվելու են վարչապետի կողմից, իսկ տեղակալները ՆԳ նախարարի առաջարկությամբ նշանակվելու եւ ազատվելու են կրկին վարչապետի կողմից:

«Այս փոփոխության ամենախորքային եւ ամենահեռանկարային իմաստը նոր ստանդարտի Ոստիկանություն եւ նոր ստանդարտի Փրկարար ծառայություն ունենալն է, եւ, ընդհանուր առմամբ, ոստիկանության աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու մասին է», - ասաց վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

Հիմա Ոստիկանությունը կառավարությանն առընթեր մարմին է, ղեկավարը՝ ապակուսակցական:

Իշխանականների հիմնավորումները, թե Ներքին գործերի նախարարություն են ստեղծում, որ բարեփոխեն Ոստիկանությունը, ընդդիմադիրների համար համոզիչ չէ: Ազգային ժողովի ընդդիմադիր «Պատիվ ունեմ» խմբակցության պատգամավոր Տիգրան Աբրահամյանն ասում էր՝ իր տպավորությամբ՝ «իշխանությունը փորձում է տարբեր մարդկանց համար տարբեր պաշտոններ, տարբեր կառույցներ ստեղծել եւ դրանք ըստ նպատակահարմարության կիրառել»:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱԶԱՏՎԵԼ Է ՊԱՇՏՈՆԻՑ

Նախագահ Արայիկ Հարությունյանը դեկտեմբերի 13-ին ստորագրել է հրամանագիր Ժիրայր Միրզոյանին Արցախի Հանրապետության արդարադատության նախարարի ժամանակավոր պաշտոնակատարի պաշտոնից ազատելու մասին:

Արցախի Հանրապետության արդարադատության նախարարի պարտականությունները ժամանակավոր վերապահվել են նախարարի առաջին տեղակալ Կամո Վիլենի Քոչարյանին:

ՕՐԸ ՀԱՅՏՆԻ Է

Շիրակի մարզի Անի խոշորացված համայնքում ՏԻՄ արտահերթ ընտրությունները կկայանան 2023 թվականի մարտի 26-ին: Որոշումը կայացվեց երեկ՝ ԿՀԸ հերթական նիստի ժամանակ:

Նախընտրական քարոզարշավը կմեկնարկի մարտի 1-ից եւ կավարտվի մարտի 24-ին: Ընտրացուցակները հասանելի կլինեն 2023 թվականի փետրվարի 14-ից:

Այստեղ ավագանու արտահերթ ընտրություններ կանցկացվեն, քանի որ 2022 թվականի սեպտեմբերի 25-ին տեղի ունեցած ՏԻՄ ընտրությունների արդյունքներով եւ դրան հաջորդած քաղաքական գործընթացներում հնարավոր չեղավ տեղական իշխանության ձեւավորել:

ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ

ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Վահե Հովհաննիսյանի տեղեկացմամբ՝ Կառավարությունն իրավունք ունի հաստատված բյուջեի 3 տոկոսի շրջանակում իրականացնելու վերաբաշխումներ: 2022 թ. իրականացվել են նման վերաբաշխումներ: Կապված օբյեկտիվ հանգամանքների հետ՝ անհրաժեշտություն է առաջանում մինչեւ տարեվերջ կատարել հավելյալ վերաբաշխումներ, որոնք պարունակում են որոշակի ռիսկ. հնարավոր է անցնել սահմանված 3 տոկոս սահմանաչափը: Այս հանգամանքը նկատի ունենալով՝ կառավարությունն առաջարկում է սահմանված 3 տոկոս սահմանաչափը միայն այս տարվա համար սահմանել 5 տոկոս:

««ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի քննարկումը վերսկսվել է ԱԺ արտահերթ նստաշրջանի դեկտեմբերի 16-ի նիստում:

Հարցի կապակցությամբ ելույթ է ունեցել ԱԺ ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Գեւորգ Պապոյանը:

Պատգամավորի խոսքով՝ առաջարկվող փոփոխությունը պայմանավորված է օբյեկտիվ իրողություններով եւ դրական ազդակների հետեւանք է: Խնդիրն առաջացել է նաեւ այն պատճառով, որ այս տարվա սեպտեմբերին բարձրացվել են թոշակները: «Եթե չբարձրացվեին կենսաթոշակները, գուցե այս փոփոխության կարիքը չլիներ: Բայց տարին լավ էր, տնտեսական աճի տեմպը բարձր էր, եւ մեզ դա հնարավորություն տվեց սեպտեմբերին թոշակները բարձրացնել, եւ բնականաբար, բյուջետային տողերում էական շեղումներ առաջացան»,- ասել է Գեւորգ Պապոյանը՝ նշելով, որ մյուս ոլորտներում եւս եղել են այլ հանգամանքներ, որոնց հետ կապված ներքին վերաբաշխումներ են իրականացվել:

ՊԵԿ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ

ՀՀ է ՆԵՐՄՈՒԾՎԵԼ ՄԱՐԻԽՈՒԱՆԱ

Օրերս Երեւանի «Աղավեն տերմինալ» ՓԲ ընկերության մաքսային հսկողության գոտում ՀՀ ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի եւ Երեւանի մաքսային սպասարկման կենտրոն-մաքսատուն վարչությունների աշխատակիցները համատեղ մաքսային զննման են ենթարկել ԱՄՆ-ից «Ֆասթ ընդ սեյֆ» ՍՊ ընկերության միջոցով Ի. Մ.-ի անունից 4 բաղաքացու անունով ՀՀ ներմուծված միջազգային սուրհանդակային առաքանիները:

Զննման արդյունքում ներմուծված միջազգային սուրհանդակային առաքանիներից մեկում առկա փաթեթներից հայտնաբերվել է շուրջ 650 գրամ ընդհանուր քաշով Մարիխուանա տեսակի թմրամիջոց: Միջազգային սուրհանդակային մյուս առաքանիի փաթեթներից հայտնաբերվել է 1562 գրամ ընդհանուր քաշով Մարիխուանա տեսակի թմրամիջոց: Մեկ այլ քաղաքացու անվամբ Հայաստան ներմուծված միջազգային սուրհանդակային առաքանիից հայտնաբերվել է շուրջ 1050 գրամ ընդհանուր քաշով թմրամիջոց, իսկ մյուս միջազգային սուրհանդակային առաքանիում՝ 334 գրամ ընդհանուր քաշով Մարիխուանա տեսակի թմրամիջոց:

Նույն օրը որոշում է կայացվել անցկացնել մի շարք անհետաձգելի օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, այդ թվում՝ «Վերահսկելի մատակարարում եւ գնում» օպերատիվ-հետախուզական միջոցառումը:

Անցկացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների ընթացքում որոշվել է կազմակերպել ՀՀ ներմուծված հիշյալ միջազգային սուրհանդակային առաքանիների առաքումը եւ հանձնումը՝ փոխարինված զանգվածներով:

ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչության օպերատիվ հետախուզության բաժնի եւ օպերատիվ-տեսչական բաժնի աշխատակիցների կողմից Երեւան քաղաքի տարբեր հատվածներից, ինչպես նաեւ Արարատի մարզի Գեղանիստ համայնքից առաքանիները ստանալուց հետո անմիջական ծագած կասկածի հիմքով ձերբակալվել եւ կոմիտեի մաքսանենգության դեմ պայքարի վարչություն են տեղափոխվել ՀՀ 4 քաղաքացի:

Միաժամանակ, օպերատիվ հետախուզական միջոցառումների ընթացքում պարզվել է, որ հիշյալ առաքանիները քաղաքացիները ստանալուց հետո պետք է փոխանցեին մեկ այլ անձի:

Օպերատիվ տեղեկություններ են ստացվել, որ առաքանիները ՀՀ ուղարկող Ի. Մ.-ն կրկին Միացյալ Նահանգներից ՀՀ է ուղարկել առաքանիների եւս մեկ խմբաքանակ, որոնցում հնարավոր է՝ կրկին առկա լինեն թմրամիջոցներ: Իրականացված հսկողության ընթացքում մաքսային հսկողության է ենթարկվել ուղարկված եւս 7 առաքանի: Արդյունքում առաքանիներում հայտնաբերվել է ընդհանուր շուրջ 3 կիլոգրամ քաշով Մարիխուանա տեսակի թմրամիջոց:

Ձերբակալված անձինք եւ հայտնաբերված թմրամիջոցները ներկայացվել են ՊԵԿ քննչական վարչություն, որտեղ նախաձեռնվել է քրեական վարույթ, եւ կատարվում է նախաքննություն:

ՄԵՂԱԴՐԱՆՔ

ՊԱՇՏՈՆԱՎԱՐՈՒՄԸ ԿԱՍԵՑՎԵԼ Է

ՀՀ քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչության Դիլիջանի քննչական բաժնում քննվող քրեական վարույթի նախաքննության ընթացքում կատարված մեծածավալ աղացուցողական եւ վարութային գործողությունների արդյունքում պարզվել են պաշտոնական անփութության արդյունքում երեք տասնյակից ավելի ծառերի ապօրինի հատման հանգամանքներ:

Մասնավորապես, քննությամբ փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ «Դիլիջան ազգային պարկ» ՊՈԱ կազմակերպության տնօրենի պաշտոնակատարը «Հաղարծին տեղամաս» մասնաճյուղի տարածքի եւ ապրանքանյութական արժեքների պահպանության պատասխանատվությունը ժամանակավորապես նույն կազմակերպության տեսուչին հանձնելու նպատակով իր հրամանով ստեղծել է հանձնաժողով եւ հրամանի կատարման հսկողությունը վերապահել է իրեն, սակայն չի ապահովել հրամանի մասին պատշաճ ծանուցում նշված անտառապահին, հանձնում-ընդունում չի կատարվել, եւ վերոհիշյալ պահաբաժինը շարունակել է մնալ առանց հսկողության:

Այդ պայմաններում 2021թ. դեկտեմբերից մինչեւ 2022թ. հունվար ընկած ժամանակաշրջանում, սակայն, նշված մասնաճյուղի պահաբաժիններից մեկի անտառապահի պարտականությունները կատարողի անաշխատունակության վիճակում գտնվելու պայմաններում վերջինիս պարտականությունների կատարումն այլ անձի չի հանձնարարել: Արդյունքում պահաբաժինն օրեր շարունակ մնացել է առանց հսկողության:

Այնուհետեւ տնօրենի պաշտոնակատարը համապատասխան հրամանով հիշյալ պահաբաժնի պահպանության պատասխանատվությունը ժամանակավորապես մեկ այլ անտառապահին հանձնելու կապակցությամբ հրամանով ստեղծել է հանձնաժողով, սահմանել հանձնման-ընդունման ժամանակահատված, հրամանի կատարման հսկողությունը վերապահել է իրեն, սակայն չի ապահովել հրամանի մասին պատշաճ ծանուցում նշված անտառապահին, հանձնում-ընդունում չի կատարվել, եւ վերոհիշյալ պահաբաժինը շարունակել է մնալ առանց հսկողության:

Նակահատվածում «Հաղարծին-տեղամաս» մասնաճյուղի՝ առանց պահպանության մնացած նշված պահաբաժնից ապօրինի հատվել է 32 հատ տարբեր տեսակի թաց, կանգուն ծառ՝ պետությանը պատճառելով առանձնապես խոշոր չափի՝ 2.217.500 ՀՀ դրամի գույքային վնաս:

Քննությամբ ձեռք բերված բավարար ապացույցների համակցությամբ՝ «Դիլիջան ազգային պարկ» ՊՈԱ կազմակերպության տնօրենի պաշտոնակատարին մեղադրանք է ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 446-րդ հոդվածի 1-ին մասով: Վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ վերջինիս նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել պաշտոնավարման դադարեցումը:

Միջոցներ են ձեռնարկվում՝ ապօրինի ծառահատումներ կատարած անձանց ինքնությունները պարզելու, նրանց հայտնաբերելու եւ վարույթն իրականացնող մարմնին ներկայացնելու ուղղությամբ: Հանձնարարություն է տրվել հետաքննության մարմնին: Նախաքննությունը շարունակվում է:

ԼՈՒՐԵՐ

ՀՐԱՄԱՆԱՏԱՐ Է ԿԱԼԱՆԱՎՈՐՎԵԼ

Դեկտեմբերի 14-ին ՀՀ գլխավոր դատախազությունը հայտնել էր, որ ՀՀ ՊՆ N զորամասի հրամանատար Ա.Հ.-ն, ունենալով մարտական հերթապահության վերաբերյալ ժամանակին որոշումներ ընդունելու, ենթականերին առաջադրանքներ տալու եւ դրանց կատարումը վերահսկելու, պետական սահմանի, շփման գծի խախտումները կանխելու, ինչպես նաեւ հակառակորդի հանկարծակի հարձակման հնարավորությունը բացառելու եւ կասեցնելու պարտավորություն, 2021 թվականի ապրիլի 15-ին, տեղեկանալով, որ իր կողմից դեռեւս 2021 թվականի ապրիլի 5-ին արձակված հրամանի պահանջները չեն կատարվել, որեւէ միջոց չի ձեռնարկել հրամանի պահանջների կատարումն ապահովելու ուղղությամբ: Արդյունքում ՀՀ զինված ուժերը զրկվել են Հայաստանի Հանրապետության վրա անակնկալ հարձակումը ժամանակին հայտնաբերելու եւ դրան դիմակայելու հնարավորությունից՝ առաջացնելով ծանր հետեւանք. 2021 թվականի մայիսի 12-ին Ադրբեջանի զինված ուժերի ստորաբաժանումները ՀՀ պետական սահմանի Գեղարքունիքի մարզի Վերին Շորժա, Կութ բնակավայրերին եւ Նորաբակ համայնքին հարող շփման գծի այն հատվածներով, որտեղ զորամասի հրամանատարի անգործության հետեւանքով սահմանված չի եղել մարտական հերթապահություն, անարգել հատել եւ մխրճվել են ՀՀ պետական սահմանից ներս, տեղակայել մարտական դիրքեր՝ վերահսկողություն սահմանելով ՀՀ սուվերեն տարածքի նկատմամբ:Հսկող դատախազի որոշմամբ 2022 թվականի դեկտեմբերի 13-ին Ա.Հ.-ի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածի 3-րդ մասով (Մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը, որն առաջացրել է ծանր հետեւանքներ): ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ հրամանատարը կալանավորվել է:

Ի՞ՆՉՆ Է ՊԱՏՃԱՌԸ

Երեւանի ընդհանուր իրավասության դատարանի Աջափնյակ 1 նստավայրում դատավորներն ընդհանուր ժողով են հրավիրել: ԲԴԽ կայքում հրապարակված տեղեկատվության համաձայն՝ օրակարգում Դատավորների ընդհանուր ժողովի դատավորների գործունեության գնահատման հանձնաժողովի դատավոր չհանդիսացող անդամի ընտրության հարցն է: Նշենք, որ հանձնաժողովի դատավոր չհանդիսացող անդամի տեղը թափուր է, քանի որ դրա անդամ, իրավական գիտնական Անահիտ Մանասյանը նշանակվել է Գլխավոր դատախազի տեղակալ: ԲԴԽ կայքում հրապարակվել են հանձնաժողովի դատավոր չհանդիսացող անդամի ինքնառաջադրված թեկնածուների վերաբերյալ տեղեկությունները եւ թեկնածուների կենսագրական տվյալները: Ինքնառաջադրվել է 6 անձ՝ Կարեն Հակոբյանը, Հայկ Մարտիրոսյանը, Առնոլդ Վարդանյանը, Սիմոն Ֆարմանյանը, Հասմիկ Ստեփանյանը եւ Արմեն Եզեկյանը: Հավելենք, որ քվորում կա, եւ նիստը մեկնարկել է:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Դեկտեմբերի 15-ից 16-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 64 դեպք, որոնցից 9-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ԿՎՃԱՐԵՆ ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔ

Ինտերնետ շահումով խաղերի կազմակերպիչները այսուհետ յուրաքանչյուր 100 մլրդ դրամ խաղադրույք ընդունելու իրավունք ձեռք բերելու համար պետք է վճարեն 175 մլն դրամ պետական տուրք, իսկ տոտալիզատորների կազմակերպիչները յուրաքանչյուր 50 մլրդ դրամ խաղադրույք ընդունելու իրավունք ձեռք բերելու համար՝ 50 մլն դրամ տուրք:

«Պետական տուրքի մասին» օրենքում լրացում եւ փոփոխություն կատարելու մասին եւ «Վիճակախաղերի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերի փաթեթը երկրորդ ընթերցմամբ ընդունվեց ԱԺ դեկտեմբերի 16-ի նիստում՝ քվեարկությամբ ստանալով 60 կողմ, 6 ձեռնպահ ձայներ:

Նախագծերի փաթեթի կարգավորման առարկան խաղային ոլորտում գործունեության երկու տեսակների՝ ինտերնետ շահումով խաղերի եւ տոտալիզատորների հարկային բեռի բարձրացումն է: Առաջարկվում է, պահպանելով լիցենզավորման համար նախատեսված տարեկան 600 մլն դրամի չափով պետական տուրքը, ներդնել նաեւ լրացուցիչ պետական տուրք՝ կախված ընդունվող խաղադրույքների ծավալից:

«Առաջարկվում է ինտերնետ շահումով խաղերի պարագայում յուրաքանչյուր 100 մլրդ դրամի չափով խաղադրույք ընդունելու պարագայում վճարել եւս 175 մլն դրամի պետական տուրք, իսկ տոտալիզատորների պարագայում յուրաքանչյուր 50 մլրդ դրամ խաղադրույք ընդունելու համար վճարել եւս 50 մլն դրամ պետական տուրք»,-ներկայացրեց ՀՀ ֆինանսների փոխնախարար Արման Պողոսյանը:

13 ԾՆՈՒՆԴ Է ԳՐԱՆՑՎԵԼ

Դեկտեմբերի 12-ից 16-ը Արցախի Հանրապետության շրջանների եւ Ստեփանակերտի Մոր եւ մանկան առողջության պահպանման կենտրոններում 13 ծնունդ է գրանցվել:

«Նորածիններից 4-ը տղաներ են, 9-ը՝ աղջիկներ: Ծնունդներից 2-ը գրանցվել են Մարտակերտի շրջանում, 1-ը՝ Մարտունու, մյուսները՝ Ստեփանակերտում»,-մանրամասնել է խոսնակը:

Նրա տեղեկատվությամբ՝ այս պահի դրությամբ առաջին բուժօգնության անհրաժեշտ դեղորայքն ու բուժպարագաները բավարարում են, սակայն դրանց մատակարարման տեսանկյունից մտահոգիչ է Արցախը Հայաստանին ու արտաքին աշխարհի հետ կապող միակ ճանապարհի փակ մնալը:

ԻՆՉ Է ՔՆՆԱՐԿԵԼ

ՓԱՇԻՆՅԱՆՆ ԱՅՑԵԼԵԼ Է ՍՈՑԱՊՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանն այցելել է Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն գերատեսչության 2022թ. գործունեության հաշվետվությունը քննարկելու նպատակով:

Խորհրդակցությանը մասնակցել են փոխվարչապետ Մհեր Գրիգորյանը, վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանը, ֆինանսների նախարար Տիգրան Խաչատրյանը, աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Նարեկ Մկրտչյանը, պետական վերահսկողական ծառայության ղեկավար Ռոմանոս Պետրոսյանը, վարչապետի աշխատակազմի պաշտոնյաներ, ԱՍՀՆ աշխատակազմի ղեկավար կազմը, պաշտոնատար այլ անձինք:

Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Նարեկ Մկրտչյանը եւ փոխնախարարները ներկայացրել են ըստ ոլորտների կատարված աշխատանքները:

Ժողովրդագրական իրավիճակի բարելավման ծրագրերի մասով զեկուցվել է, որ ընթացիկ տարում մեկնարկել եւ շարունակվում է 3-րդ եւ հաջորդ երեխայի ծննդով պայմանավորված պետական աջակցության ծրագիրը (մինչեւ երեխայի 6 տարեկան լրանալը), շարունակվել են երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության պետական աջակցության ծրագրերը: 2023թ. հունվարի 1-ից մինչեւ 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ կնշանակվի նաեւ քաղաքաբնակ չաշխատող մայրերին. աշխատանքի վերադառնալիս եւս վճարում կկատարվի նպաստի 85 տոկոսի չափով՝ ներկայիս դադարելու փոխարեն: Մշակվում է Ժողովրդագրության ռազմավարությունը, որը կներկայացվի 2023թ. փետրվարին:

Կենսաթոշակային ապահովության ոլորտում աճում է անկանխիկ շրջանառության ծավալը. կենսաթոշակների շուրջ 77 տոկոսը վճարվում է անկանխիկ եղանակով: 2023 թ.-ից՝ 1000-ից ավելի բնակիչ ունեցող գյուղերում, իսկ 2024 թ.-ից բոլորը (բացառությամբ 75 տարեկանից բարձր եւ հաշմանդամության 1-ին կամ 2-րդ խումբ ունեցողների) կենսաթոշակը կստանան անկանխիկ եղանակով: 2022թ. միջին կենսաթոշակը 43.500 ՀՀ դրամից դարձել է 46.200, նվազագույնը՝ 26.500 ՀՀ դրամից 31.600: Մեկնարկել է կենսաթոշակի եւ նպաստի 10 տոկոս հետվճարի միջոցառումը. կենսաթոշակային քարտեր սպասարկող 4 բանկ միացել է նախաձեռնությանը, որոնց ծածկույթը անկանխիկ վճարումներում կազմում է ավելի քան 60 տոկոս: Նոյեմբեր ամսվա տվյալներով՝ շուրջ 60.000 շահառու իր կենսաթոշակից (նպաստից) ծախսերի 66 տոկոսը կատարում է անկանխիկ:

Սոցիալական երաշխիքների ոլորտում մշակվել է «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի խմբագրված նախագիծը, որը թույլ կտա հասցեական արձագանքել կարիքներին եւ ընդլայնել ծառայությունների տեսակները: Աղքատության փուլային հաղթահարման նպատակով շուրջ 300 շահառու (յուրաքանչյուրը) ստացել է մինչեւ 1.6 մլն ՀՀ դրամ բիզնես դրամաշնորհ, գործարկվել են սոցիալական շտապօգնության մեխանիզմների եւ սննդային քարտերի տրամադրման պիլոտային ծրագրերը: Մշակվել են անապահովության գնահատման նոր բանաձեւը եւ հայեցակարգի նախագիծը:

Աշխատանքի եւ զբաղվածության ոլորտի բարեփոխումների շրջանակում 2023թ. հունվարի 1-ից կբարձրանա նվազագույն ամսական աշխատավարձը. 68.000 ՀՀ դրամի փոխարեն այն կկազմի 75.000 ՀՀ դրամ: Ընթացքի մեջ են Աշխատանքային օրենսգրքի փոփոխությունները. նախատեսվում է 266 հոդվածից փոփոխել 125-ը: Հաջորդ տարում նախատեսվում է շրջանառել զբաղվածության ռազմավարությունը: 2022թ. սեզոնային զբաղվածության ապահովման ծրագրից օգտվել է 1179 քաղաքացի, արցախցիների համար աշխատանքային փորձի ձեռքբերման եւ վարձատրվող հասարակական աշխատանքների միջոցառումից՝ 326 անձ, 2016թ. եւ 2020թ. ռազմական գործողությունների մասնակիցների զբաղվածության ապահովման ծրագրից՝ 276 անձ:

Ընթացիկ տարում շարունակվել է սոցիալական ծառայությունների տրամադրումը խոցելի խմբերին՝ երեխաներին, տարեցներին, հաշմանդամություն ունեցող անձանց, կանանց, թրաֆիքինգի եւ շահագործման ենթարկված անձանց: Առաջիկայում նախատեսվում է անձի ֆունկցիոնալության գնահատման նոր համակարգի ներդնում, որը թույլ կտա իրականացնել անձի կարիքների բազմակողմանի գնահատում եւ տրամադրել անհատական կարիքներին համարժեք սոցիալական ծառայություններ:

Հաշվետվության ներկայացումից հետո քննարկում է ծավալվել ժողովրդագրության, կենսաթոշակային ապահովության, սոցիալական աջակցության, զբաղվածության, սոցիալական խնամքի ծառայությունների, նաեւ մյուս ուղղություններով ընթացիկ արդյունքների ու հետագա անելիքների շուրջ: Ամփոփելով մտքերի փոխանակությունը՝ վարչապետը հանձնարարականներ է տվել պատասխանատուներին:

ԼՈՒՐԵՐ

ԿԱՆԽՎԵԼ Է ՎԱՃԱՌՔԸ

ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի տեսուչների եւ ՀՀ ոստիկանության եւ պարեկային ծառայության համատեղ խստացված վերահսկողական միջոցառումների արդյունքում երեկ գիշերը խափանվել է ոչ սպանդանոցային ծագման մսի մեծ խմբաքանակի մուտքը իրացման ցանց:

ՍԱՏՄ-ից հայտնում են, որ մասնավորապես Լոռու մարզի Ալավերդի-Վանաձոր մայրուղու անցակետում կանգնեցված մեքենայում հայտնաբերվել է 100 կգ, իսկ Տավուշի մարզի Դիլիջան-Սեւան մայրուղու անցակետում կանգնեցված մեքենայում՝ 659 կգ տավարի մսեղիք, որը տեղափոխվել է առանց անասնաբուժական 5-րդ ձեւի ուղեկցության:

Նաեւ Գեղարքունիքի մարզի մսի իրացման երկու կետերում հայտնաբերվել է 660 կգ ոչ սպանդանոցային ծագման միս, որի վաճառքը կասեցվել է:

Ընդհանուր առմամբ կանխվել է 1419 կգ ոչ սպանդանոցային ծագման մսի վաճառքը:

Տեսչական մարմնի Լոռու, Տավուշի եւ Գեղարքունիքի մարզային կենտրոնների տեսուչների կողմից կազմվել են արձանագրություններ թե՛ տնտեսավարողների, թե՛ տեղափոխող անձանց վերաբերյալ, որոնք կենթարկվեն վարչական պատասխանատվության:

Տրվել են նաեւ հայտնաբերված մսեղիքն օգտահանելու կամ ոչնչացնելու մասին կարգադրագրեր:

ԿՍՏԵՂԾՎԻ ԴԱՏԱՐԱՆ

Հայաստանում նախատեսվում է ստեղծել Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարան: Հիմնավորման մեջ նշվում է, թե Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի ծանրաբեռնվածությունը հաղթահարելու նպատակով է նախատեսվում առանձնացնել Երեւան քաղաքում ընդհանուր իրավասության քաղաքացիական եւ քրեական դատարանները:

Հակակոռուպցիոն դատարանը՝ որպես մասնագիտացված դատարան, ստեղծվել է 2021թ. ապրիլին ընդունված օրենսդրական փոփոխություններով: Իր հերթին վճռաբեկ ատյանում նույնպես հակակոռուպցիոն գործերով արդյունավետ քննություն ապահովելու նպատակով փետրվարի 19-ին ընդունված օրենքով ստեղծվել է Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատը:

Փաթեթով առաջարկվում է նաեւ դատարանների նախագահներին վերապահել նոր լիազորություններ, առաջարկվում է հնարավորություն տալ ԲԴԽ սահմանած կարգով մշտադիտարկում իրականացնել դատարանում գործերի քննության ողջամիտ ժամկետի պահպանման նկատմամբ: Իսկ Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի ծանրաբեռնվածությունը հաղթահարելու նպատակով առաջարկվել է առանձնացնել Երեւան քաղաքում ընդհանուր իրավասության քաղաքացիական եւ քրեական դատարանները:

Փոփոխություններ են առաջարկվել նաեւ դատավորների թեկնածուների հավակնողների ցուցակում ներառման կարգում: Նախատեսվում է, որ ապահովվի դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում վերջին 10 տարվա ընթացքում մասնագիտական աշխատանքի առնվազն 8 տարվա փորձառություն ունեցող անձանց ընդգրկման հնարավորությունը:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 8 ՃՏՊ. 16 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԽՆԴԻՐՆԵՐ

ԳՐՈՒԹՅՈՒՆ՝ ՊՆ

«Հայրենադարձված գերիների հետագա ծառայության շարունակության հարցը պետք է որոշվի ոչ միայն նրանց ֆիզիկական առողջության հաշվառմամբ, այլ նաեւ հոգեկան առողջության վիճակի գնահատմամբ եւ պատշաճ փորձաքննության իրականացման արդյունքում. բոլոր այն դեպքերում, երբ հայրենադարձված գերիները հոգեկան առողջության հետ կապված խնդիրը անհամատեղելի կլինեն զինվորական ծառայությունը շարունակելու հետ, նրանք պետք է արձակվեն զինված ուժերից»,- ասել է Մարդու իրավունքների պաշտպան Քրիստինե Գրիգորյանը՝ անդրադառնալով հայրենադարձված գերիների հետագա ծառայության շարունակության վերաբերյալ խնդրին:

«Տեղեկացնում եմ, որ հայրենադարձված հայ ռազմագերիների հետ ՄԻՊ ներկայացուցիչների հետ հանդիպումների ընթացքում եւ դրանից հետո, ըստ հայրենադարձված ռազմագերիների ցանկության, նրանց մի մասը ուղղորդվել է անվճար հոգեբանական աջակցություն ստանալու: Բացի դա, ըստ նրանց կողմից ներկայացված դիմումների կամ հոգեբանների կողմից տրված համապատասխան եզրակացությունների, Պաշտպանը համապատասխան գրություններ է հասցեագրել ՀՀ ՊՆ՝ վերջիններիս պատշաճ փորձաքննելու եւ նաեւ, հոգեբանների կողմից տրված եզրակացությունների հաշվառմամբ, զինծառայողների հետագա ծառայության պիտանիության հարցը որոշելու համար:

Պետք է հստակ նշել, որ հայրենադարձված գերիների հետագա ծառայության շարունակության հարցը պետք է որոշվի ոչ միայն վերջիններիս ֆիզիկական առողջության հաշվառմամբ, այլ նաեւ հոգեկան առողջության վիճակի գնահատմամբ եւ պատշաճ փորձաքննության իրականացման արդյունքում: Եվ բոլոր այն դեպքերում, երբ վերջիններիս հոգեկան առողջության հետ կապված խնդիրը անհամատեղելի կլինի զինվորական ծառայությունը շարունակելու հետ, նրանք պետք է արձակվեն զինված ուժերից: Բացի դա, պետությունը ունի պոզիտիվ պարտականություն նրանց առողջության պահպանման հարցում, եւ պետք է նրանց տրամադրվի պատշաճ բժշկական օգնություն»,- ասել է Գրիգորյանը:

ՄԻՊ-ի խոսքով՝ հայրենադարձված գերիների մի մասի վերաբերյալ Պաշտպանը համապատասխան գրություններ է ուղարկել ՀՀ ՊՆ՝ հայրենադարձված ռազմագերիներին պատշաճ փորձաքննելու եւ բժշկական օգնություն ցույց տալու պահանջով:

«Այս ուղղությամբ աշխատանքները շարունակվում են եւ գտնվում են Պաշտպանի ուշադրության կենտրոնում»,- եզրափակել է Քրիստինե Գրիգորյանը:

ԾՐԱԳՐԵՐ

2023Թ. ԿԱՎԱՐՏՎԻ ՄԱՐԶԱԴՊՐՈՑՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ

Հանրապետությունում իրականացվող մարզական կառույցների շինարարության վերահսկողության նպատակով Քաղաքաշինության կոմիտեի նախագահ Արմեն Ղուլարյանը հերթական շրջայցն է կատարել մարզական կառույցների շինհրապարակներում: Կոմիտեի պատասխանատուների, կապալառու, տեխնիկական եւ հեղինակային հսկողություն իրականացնող ընկերությունների ներկայացուցիչների հետ նա հետեւել է Արմավիրի մարզի Ջրառատ գյուղում Սիմոն Մարտիրոսյանի անվան ծանրամարտի մարզադպրոցի, Վաղարշապատի Երվանդ Օշականի անվան N 7 հիմնական դպրոցի նոր մարզադահլիճի, Արտիմետի միջնակարգ դպրոցի նոր մարզադահլիճի կառուցման ու «Երեւանի թենիսի եւ բադմինթոնի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի «Կիլիկիա» մարզադահլիճի վերակառուցման աշխատանքներին, ծանոթացել ծրագրերի ընթացքը, կատարել դիտարկումներ:

ՀՀ քաղաքաշինության կոմիտեից ArmLur.am-ին հայտնեցին, որ Ջրառատի ծանրամարտի մարզադպրոցի կառուցման ծրագրի ավարտից հետո այստեղ հնարավոր կլինի անցկացնել հանրապետական առաջնություններ: Ներկայում ավարտվել է շենքի հիմնակմախքի կառուցումը, ընթանում են երեսապատման ու ներքին հարդարման աշխատանքները:

Հաջորդ կանգառները էջմիածին քաղաքում եւ Արտիմետ գյուղում էին, որտեղ կառուցվում են հանրակրթական դպրոցների մարզադահլիճները: Քաղաքաշինության կոմիտեի պատվիրատվությամբ ներկայում նմանատիպ 30 մարզադահլիճ է կառուցվում կամ վերակառուցվում հատակագծային այնպիսի լուծումներով, որոնք թույլ կտան, որպեսզի մարզադահլիճների հնարավորություններից օգտվեն ոչ միայն աշակերտները, այլ նաեւ համայնքի բնակիչները: Դրանցից շատերը ներառում են նաեւ հանդիսությունների սրահ, իսկ տեղակայման տարածքը թույլ է տալիս նաեւ ֆուտբոլի դաշտ եւ սպորտային հրապարակներ ունենալ:

Կառավարության որդեգրած սկզբունքի համաձայն՝ պետական պատվերով երկրում ընթացող շինարարական մեծածավալ ծրագրերն իրագործվում են համալիր մոտեցմամբ: Ինտերիերի դիզայնը, ճեւավորման նյութերի եւ գույների ընտրությունը, տարածքի բարեկարգումը նույնպես հաշվի են առնվում հենց նախագծման փուլից: Բոլոր օբյեկտները շահագործման են հանձնվելու ամբողջությամբ կահավորված: Արմեն Ղուլարյանը կապալառու կազմակերպությունների ներկայացուցիչների հետ ծրագրերի ընթացքը քննարկելիս առանձնահատուկ կարեւորել է նախատեսված բոլոր հարմարությունների ապահովումը եւ աշխատանքների որակի սահմանված բարձր նշաձողի պահպանումը:

Սիմոն Մարտիրոսյանի անվան ծանրամարտի մարզադպրոցից ու «Երեւանի թենիսի եւ բադմինթոնի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի «Կիլիկիա» մարզադահլիճից բացի, կոմիտեի համակարգմամբ իրականացվում են եւս 5 մասնագիտացված մարզադպրոցի կառուցման կամ վերակառուցման ծրագրեր. դրանք են «Արթուր Ալեքսանյանի անվան հունահռոմեական ըմբշամարտի մանկապատանեկան դպրոց» նոր սպորտային համալիրը, Հեծանվային սպորտի եւ Հրանտ Շահինյանի անվան սպորտային, գեղարվեստական մարմնամարզության եւ ակրոբատիկայի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոցները, Օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջի մարզադահլիճները:

Արթուր Աբրահամի անվան մարզադպրոցի նախագծման աշխատանքները մտել են մեկնարկման փուլ, իսկ Վիկ Դարչինյանի անվան բռնցքամարտի մարզադպրոցի համար կատարվում է տարածքի ընտրություն: Քաղաքաշինության կոմիտեն նախատեսում է 2023 թվականին ավարտել, ընդհանուր առմամբ, 32 մարզադահլիճի եւ մարզադպրոցի կառուցման ու վերակառուցման ծրագիր:

Հանրապետությունում ընթացող աննախադեպ ծավալով շինարարությանը զուգահեռ, կոմիտեի ուշադրության կենտրոնում շարունակում է մնալ շինարարության կազմակերպման մշակույթի արմատավորումը, շինհրապարակում աշխատանքային կանոնների պահպանումը եւ պատշաճ միջավայրի ապահովումը: Պարբերական շրջայցերի միջոցով կոմիտեի պատասխանատուները փորձում են նպաստել հարցի կարգավորմանն ուղղված օրենսդրական փոփոխությունների գործնական կիրառմանը: Խիստ կարեւորվում է նաեւ օբյեկտների շինարարությունը սահմանված ժամկետներում ավարտելու հարցը:

SS ՈԼՈՐՏ

ՍԿՄՆԱԿՆԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿՍՏԱՆԱՆ

Խորհրդարանը երկրորդ ընթերցմամբ եւ ամբողջությամբ ընդունեց կառավարության օրենսդրական նախաձեռնությունը, որով առաջարկում է SS ոլորտի սկսնակ ընկերություններին հարկային արտոնության տեսքով պետական աջակցության տրամադրման ժամկետը երկարաձգել եւս մեկ տարով:

«Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին եւ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին օրենքների նախագծերի փաթեթն ԱԺ նիստում քվեարկությամբ ստացավ 66 կողմ ձայն:

Օրենքով տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի նոր ստեղծվող, սկսնակ տնտեսավարող սուբյեկտներին տրամադրվում են հարկային արտոնություններ, մասնավորապես՝ շահութահարկի 0% դրույքաչափի եւ եկամտային հարկի 10% դրույքաչափի կիրառմամբ: Նախագծով առաջարկվում է հարկային արտոնության տեսքով պետական աջակցության տրամադրման ժամկետը երկարաձգել եւս մեկ տարով՝ նախատեսելով, որ հավաստագրերի գործողության ժամկետը կերկարաձգվի մինչեւ 2023թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ:

2015 թվականից մինչեւ այս տարվա նոյեմբերի 8-ը հարկային արտոնություն է ստացել 2304 նորաստեղծ տեխնոլոգիական ընկերություն:

ԱԺ փոխնախագահ Հակոբ Արշակյանն ընդգծեց, որ այս օրենքի արդյունքում հարյուրավոր նոր ընկերություններ են մուտք գործել Հայաստանի բարձր տեխնոլոգիական ոլորտ: «Հազարավոր աշխատակիցներ իրենց եկամտային հարկի բեռի իջեցմամբ, ինչպես նաեւ շահութահարկի զրոյական դրույքով աշխատանքի արդյունքում կարողացել են հավելյալ արժեքներ ստեղծել Հայաստանի տնտեսության համար»,- ասաց Արշակյանը:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

«ՍԱՌՑԵ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ»

ԹԱՏՐՈՆՆԵՐԸ ՊԱՏՐԱՍՏ ԵՆ ՏՈՆԵԼՈՒ ԱՄԱՆՈՐԸ

Հայաստանի մարզերի թատրոնները պատրաստվում են Ամանորին նոր ներկայացումներով ու տոնական միջոցառումներով, որոնք կարող են հետաքրքրել եւ՝ փոքրիկներին, եւ՝ մեծահասակ հանդիսատեսին:

Վանաձորի Հովհաննես Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոնում դեկտեմբերի 20-30-ը ցուցադրվելու է «Սառցե թագավորություն» ամանորյա երաժշտական ուրախ ներկայացումը: Հեքիաթի հերոսները սիրով կսպասեն եւ՝ մեծահասակներին, եւ՝ փոքրիկներին:

Գյումրու Վարդան Աճեմյանի անվան պետական դրամատիկական թատրոնում թատերասերները դեկտեմբերի 23-29-ը հնարավորություն կունենան դիտելու «Մերին եւ ամանորյա հրաշքը» ներկայացումը: Յուրաքանչյուրիս կյանքում ամենակարեւորը մանկությունն է, որից հեռացել էր հեքիաթի հերոսուհի Մերին: Սուրբծննդյան օրը նա կարողանում է իր ընկերների օգնությամբ գտնել իր կորցրած մանկությունը: Մենք պետք է կարողանանք միշտ վառ պահել մեր մեջ ապրող այն հեքիաթը, որը ծնվում եւ մեծանում է մեր մանկության հետ միասին:

Ամանորի կախարդանքը մոտ է. հիշեցնում է Գավառի Լեւոն Քալանթարի անվան պետական դրամատիկական թատրոնը: Թատրոնը հանդիսատեսին հորդորում է շտապել փոքրիկների օրը տոն դարձնել, պարգեւել բարձր տրամադրություն ու ժպիտներ՝ դեկտեմբերի 20-ից թատրոնում դիտելով «Ամանորի կախարդանքը» մանկական երաժշտական ներկայացումը:

Արտաշատի Ամո Խարազյանի անվան պետական դրամատիկական թատրոնը դեկտեմբերի 19-30-ը հրավիրում է դիտելու «Զնեմարդը» ամանորյա երաժշտական ներկայացումը: «Զնեմարդը» ներկայացումը ամանորյա հրաշքի, ընկերության, համերաշխության եւ սիրո մասին է: Հանդիսատեսը հնարավորություն կունենա մասնակիցը դառնալու հրաշքի:

Կապանի Ալեքսանդր Շիրվանզադեի անվան դրամատիկական թատրոնում դեկտեմբերի 23-ից սկսած թատերասերները կարող են դիտել «Կաղանդ պապի վերադարձը» ներկայացումը: Ծնողները կարող են հիշարժան ու անմոռանալի րոպեներ պարգեւել իրենց եւ իրենց բալիկներին՝ հաճախելով այս ներկայացմանը, որտեղ սպասվում են շատ ու շատ հետաքրքիր ու գեղեցիկ պահեր:

ՃԳՆԱԺԱՄ

ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ԴԻՄՈՒՄ Է

Հայաստանի գրողների միության վարչությունն ու նախագահությունը դիմում են աշխարհի գրական-մշակութային կազմակերպություններին, գործիչներին՝ շեշտելով, որ ադրբեջանցի չակերտավոր բնապահպանների՝ Ստեփանակերտ-Գորիս ճանապարհը բնապահպանական հորինովի խնդիրներով փակելու հետեւանքով Լեռնային Ղարաբաղում ծանր սոցիալ-տնտեսական եւ բարոյահոգեբանական վիճակում են նաեւ գրողների միության անդամները:

Տարածած հաղորդագրության մեջ միությունը ակնկալում է միջազգային կազմակերպությունների ձայնի ուժգին ալիքը, այլապես այսպիսի «բնապահպաններ» մի օր հայտնվելու են իրենց երկրների ճանապարհներին:

«Զարմանալի է՝ ուր էին այդ բնապահպանները, երբ ֆոսֆորի ռումբեր էին նետում Լեռնային Ղարաբաղի անտառների, բեկորային ռումբեր էին նետում քաղաքացիական շենքերի, մանկապարտեզների, դպրոցների, հիվանդանոցների վրա: Երեւի այդ ժամանակ սելֆի էին անում Ռամիլ Սաֆարովի հետ: Բարեբախտաբար, աշխարհի բարեսիրտ մարդիկ, օրինասեր միջազգային կազմակերպությունները եւ երկրները իրենց ձայնն էին բարձրացնում այս մարդկային, ցեղասպան, դարերով մշակված գործողությունների դեմ: Լեռնային Ղարաբաղում գրողների միության անդամները ծանր սոցիալ-տնտեսական եւ բարոյահոգեբանական վիճակում են: Նրանցից ոմանք ծեր են, հիվանդ եւ բուժօգնության ու աջակցության կարիք ունեն»,-ասվում է հաղորդագրության մեջ:

ԼՈՒՐԵՐ

ԲՈՂՈՔ Է ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ ՖԻՖԱ

Մարոկկոյի ֆուտբոլի ֆեդերացիան (FRMF) պաշտոնական բողոք է ներկայացրել ֆուտբոլի միջազգային ֆեդերացիա (ՖԻՖԱ):

Մարոկկացիների բողոքը վերաբերում է աշխարհի առաջնության կիսաեզրափակչում Ֆրանսիայի հավաքականի դեմ հանդիպման մրցավարական աշխատանքին: Այդ հանդիպումը սպասարկել էր մեքսիկացի Սեզար Ռամոսի գլխավորած անձնակազմը:

FRMF-ը կարծում է, որ Ռամոսը երկու 11-մետրանոց չի նշանակել ֆրանսիացիների դարպասին: 27-րդ րոպեին ֆրանսիացի պաշտպան Տեո Էրնանդեսը սեփական տուգանային հրապարակում բախվել է մարոկկացի կիսապաշտպան Սոֆյան Բուֆալի հետ: Մրցավարը խախտում էր արձանագրել Բուֆալի գործողություններում եւ նրան ցույց տվել դեղին քարտ: Ըստ մարոկկացիների՝ մեքսիկացի մրցավարը 11-մետրանոց չի նշանակել նաեւ ֆրանսիացիների տուգանային հրապարակում Սելիմ Ամալայի ընկնելու դրվագում:

«FMRF-ը դիմել է համապատասխան մարմնին՝ խնդրելով վերանայել մրցավարական որոշումները, որոնք զրկել են Մարոկկոյի հավաքականին երկու 11-մետրանոցներից: Ըստ մի շարք մրցավարական փորձագետների՝ դրանք անվիճելի էին: Մենք նաեւ զարմացած ենք, որ մրցավարի տեսաօգնականը (VAR-ը) չի արձագանքել այս դրվագներին»,- նշված է Մարոկկոյի արքայական ֆուտբոլի ֆեդերացիայի հայտարարությունում:

ԼՈՂԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

Մելբուռնում մեկնարկել է աշխարհի լողի առաջնությունը (25 մետր լողավազանում):

Այս մասին հայտնում է ՀԱՕԿ-ը: Բատերֆլայ ոճում Արթուր Բարսեղյանը 50 մետրն անցել է 23,65 վայրկյանում եւ 66 մրցակիցների պայքարում գրավել է 46-րդ տեղը: Այդ արդյունքը նրա իսկ սահմանած ՀՀ ռեկորդի կրկնություն էր, որն ընդամենը շաբաթներ առաջ գրանցել էր Կազանում անցկացված միջազգային մրցաշարում: Դեկտեմբերի 16-ին նա կմրցի 50 մետր ազատ ոճում:

Հայաստանի երկրորդ պատվիրակ Անի Պողոսյանը 100 մետր ազատ ոճում 63 մասնակիցների պայքարում ցույց տվեց 57,91 վայրկյան արդյունք եւ գրավեց 44-րդ տեղը: Այս ցուցանիշը հինգ տասնորդական վայրկյանով ցածր է անձնական ռեկորդից: Նա իր ունակությունները պետք է դրսեւորի նաեւ 50մ եւ 200մ ազատ ոճերում:

● *Դեկտեմբերի 18-ին «Հեփիում» թանգարանում տեղի կունենա «Գլխիվայր Ամանոր» ամանորյա ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2500 դրամ: Սկիզբը՝ժամը 16:00-ին:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՐՑ. Ո՞վ իրավունք ունի օգտվելու խնամքի ծառայություններից:

Կարեն Մկրտչյան (27 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Գնահատված կարիքների համաձայն՝ խնամքի ծառայությունները տրամադրվում են ծերության սոցիալական կենսաթոշակի տարիքի հասած կամ 18 տարին լրացած միայնակ (ՀՀ օրենսդրությամբ նախատեսված խնամող չունեցող կամ ընտանիքում աշխատունակ անդամ չունեցող) հաշմանդամներին:

ՀՀ աշխատանքի
եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Խնամքի տրամադրման տեսակներն են՝ խնամքը տնային պայմաններում, բնակչության սոցիալական պաշտպանության շուրջօրյա խնամքի ընդհանուր կամ հատուկ տիպի (մասնագիտացված) հաստատություններում եւ սոցիալ-վերականգնողական ցերեկային կենտրոններում:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. «Դրամարկղային գործառնությունների մասին» ՀՀ օրենքը տարածվո՞ւմ է արդյոք գրավատների վրա:

Մեսրոպ Պատվականյան (38 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. «Դրամարկղային գործառնությունների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ օրենքը տարածվում է ՀՀ տարածքում գործող իրավաբանական անձանց, ԱԱՀ վճարող համարվող անհատ ձեռնարկատերերի, պետական եւ այլ հիմնարկների, դրանց՝ ՀՀ տարածքում գործող առանձնացված ստորաբաժանումների (մասնաճյուղերի, ներկայացուցչությունների), օտարերկրյա կազմակերպությունների՝ ՀՀ տարածքում գործող առանձնացված ստորաբաժանումների (մասնաճյուղերի, ներկայացուցչությունների) (այսուհետ՝ կազմակերպություններ) վրա: Այն չի տարածվում բանկերի եւ դրանց առանձնացված ստորաբաժանումների (մասնաճյուղերի, ներկայացուցչությունների), այդ թվում՝ օտարերկրյա բանկերի առանձնացված ստորաբաժանումների (մասնաճյուղերի, ներկայացուցչությունների), արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններ իրականացնող անձանց, վարկային կազմակերպությունների վրա:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». «Դրամարկղային գործառնությունների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ կանխիկ դրամով վճարումների նկատմամբ սահմանվում է սահմանափակում. ապրանքների, ծառայությունների, աշխատանքների միանվագ գնման դեպքում դրանց դիմաց կանխիկ դրամով վճարման գումարի առավելագույն չափը 300000 դրամ է:

ԼՈՒՌ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում

Ազգային ժողովի շենքի պարիսպը, նախկինի համեմատ, արդեն կրկնակի բարձր է: ArmLur.am-ի տեսախցիկը ֆիքսել է, որ պարիսպների վերեւում նոր ցանկապատներ են ավելացրել: Ստացվում է, որ ԱԺ-ում հսկողությունն ուժեղացնում են. թե որն է պատճառը, հայտնի չէ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **16.12.2022**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: